բերով, մէկ կողմից էլ ամբացրած է երկկարգ հատ պարիսպներով, բուրգերով եւ աշտարակներով: Բերդը կառուցել է Աշոտ Ողորմածի թոռն Դաւիթ Անհողը:

Ահա հայ մշակութային եւ քաղաքական անցեալով հարուստ մեր այդ բնագաւառն է, Տաշիրք — Լոռին, որ վրացիները իրենց երկրի սահմանների մէջ առնել են նկրտում. մի բնագաւառ, որի նկարագրած մասում թէկուզ նրմուշի համար մէկ հատիկ վրացական դիւղ չկայ:

Եւ սակայն եթէ ոչ ամբողջ Լոռին, բայց նրա մի փոքր մասը Վրաստանի մէջ է գտնըւում այժմ, մի չարք զուտ հայկական դիւղերով: Բուն Լոռիից այն կողմը, որ լեռնաստանը վերջանում է եւ հարթավայրն է սկսում, նոր ժամանակների յորջորջումով եւ թուրքթաթարական մի ցեղի անունով Բորչալու է կոչւում այժմ:

Այսպիսով՝ որոշապէս զատելու է իրարուց Լոռին եւ Բորչալուն: Մէկը լեռնային է, միւսը՝ դաշտային: Մէկը պատմականօրէն եւ ամբողջովին հայկական է եղած միշտ. դա հին Տաշիրքն է: Կամ այժմեան Լոռին, թէեւ առաջինը բաղդատարար աւելի ընդարձակ սահմաններ է ունեցել, քան որ արտայայտում է Լոռի յորջորջումը: Յամենայն դէպս, պատմական Տաշիրքի սահմանները որչափ ինձ է յայտնի, մինչեւ Թրամ գետը չեն հասել: Այս պատճառ չէ հարկաւ, որ հայկական պահանջները այսօր Թրամի աջ հովիտն եւս չընդգրկեն, քանի որ վարչական եւ պետական սահմանագըծումների խնդրում ոչ թէ պատմական, այլ իրական–ցեղագրական տուեալները հաշուի առնելու է եւ ամենից առաջ՝ ազգաբնակութեան կամքը:

Բոլոր պարագաներում՝ գաղափարների շփոթութիւն չառաջացնելու համար՝ անհրաժեշտ է, որ շատ որոշ կերպով իրարուց տարբերե՛նք Լոռին եւ Բորչալուն, ճիշդ այնպէս, ինչպէս որ ժողովուրդի բերնում կատարւում է այդ: Լոռի, լոռեցի եւ Բորչալու, բորչալուեցի բառերը ժողովուրդը խիստ տարբերում է իրարից:

Լոռին — դա լեռնաստանն է,— Յովհաննէս Թումանեանի ոգիների աշխարհը, (եւ նրա ծննդավայրը) ձորերի ու խոր հովիտների, լեռնակատարների ու գարաւանդների երկիր, անտառներով եւ արօտներով հարուստ: Լոռեցին — դա բնութեան գրկում ապրող սարեցի անտաշ հայն է: Բորչալուն, ընդհակառակը,— դա դաշտագետին է, անվերջ հարթութիւն: Բորչալուեցին էլ — դա ոչ միայն կամ ոչ այնչափ դաշտեցի հայն է, այլ եւ ու մանաւանդ՝ դաշտեցի թուրքը, բաւական աւադակաբարոյ: Բոլոր պարագաներում՝ բորչալուեցի բառի տակ ոչ ոք վրացի չի հասկանայ, այլ՝ հայ կամ թուրք: Եթէ ուրեմն գեղագրական տեսակէտից Բորչալուի պատկանելիութեան մասին վէճ լինել կարող է, ապա ուրեմն՝ միայն հայի եւ թաթարի մէջ: Իսկ այսօր նրան վրացին է տիրացած:

Լոռի եւ Բորչալու յորջորջումները իրարուց տարբերելու է նաեւ քաղաքական տեսակէտից: Մինչեւ այսօր էլ վրացիք — անշուշտ դիտակցաբար — երբեք բերանին չեն առնում Լոռի անունը, այլ գործ են ածում միայն Բորչալու արտայայտութիւնը, դրա տակ հասկանալով ոչ միայն բուն Բորչալուն (դաշտը), այլ եւ Լոռին (լեռնաստանը):

Ուրիշ խօսքով՝ Բորչալու ասելով նրանք հասկանում են ցարական կառավարութեան օրով գոյութիւն ունեցող Բորչալուի գաւառը. մի մառնակի անուն (դաշտային գաւառամասի), որ ընդհանրացել էին ամբողջի համար (Լոռին էլ մէջը լինելով, թէեւ վերջինս տարածութեամբ ու բնակիչների թուով յետ չէր մնում առաջինից):

Այսպէս ընդհանրացնելով Բորչալու յորջորջումը ու բնաւ չյիշատակելով Լոռին, վրացիք ուզում են հասկացրած լինել, թէ Լոռի ասածդ որպէս առանձին հողամաս գոյութիւն էլ չունի, թէ՝ դա մի մասնիկն է իրենց, վրացական Բորչալուի: Դրանով ուզում են նաեւ ասած լինել՝ լա՛ւ, եթէ հայերը վէճ են յարուցում «Բորչալուի գաւառի» մասին (ի՞նչ սիրով են նրանք կառչած մնում ցարական յորջորջումներին եւ սահմանաբաժանումներին), մենք «պատրաստ ենք» ընդառաջ երթալու, հայերին «զիջելով» «մեր Բորչալուի» հարաւային մասը (առանց Լոռի անունը տալու): Ուրիշ խօսքով՝ նրանք «մեծահոգաբար» Հա-